հաւատս, որ յԱստուած կենդանի, և ըստ անստերիւր դաւանութեան և վարդապետութեան նորին, կան անխախտելի ի հիմն եկեղեցւոյ ի Քրիստոս Յիսուս, սրբութեամբ պաշտելով զայն՝ զոր ուսուցանէ Հայաստանեայցս առաքելական սուրբ եկեղեցի։

Եւ ի վերայ այսց Աստուածային օրհնութեան և Հայրապետական բարեմաղթութեան մերոյ՝ պարտ անձին համարիմք յիշեցուցանել և զայս, զի ամենայն բարեպաշտական գործք և առաքինական ճգունք, զոր գործեմք երկնաւորին ակնկալութեան փորձուց, մի միայն պսակադիրն է սէր և խաղաղութիւն, առանց որոց ի զուր են ամենայն բարեգործութիւնք, ի զուր և նահատակութիւն որ յանուն Աստուծոյ։ Եւ զայս ինքնին Առաքեալն Պօղոս ուսուցանէ մեզ յանձն իւր առակեալ.—

«Եթէ ջամբիցեմ, ասէ, զամենայն ինչս իմ աղքատաց և մատնիցեմ զմարմին իմ յայրումն, և զսէր ոչ ունիցիմ՝ ոչ ինչ եմ, և ոչինչ օգտիմ»։

Արդ՝ զայս ամենայն գիտելով, սիրելիք իմ, պատուէր տամք ձեզ՝ իբրեւ առաւելագունի բարւոյ՝ զհետ լինել սիրոյ և առնել խաղաղութիւն յանձինս ձեր։

Լուեալ իսկ եմք, զի թէ և յամենայն գործս բարիս կատարեալ էք, այլ յայսմանէ ի սիրոյ սակաւք ոմանք թերանան և առ միմեանս բերին առելութեամբ ոչ ունելով յանձին զխաղաղութիւնն, զոր աւանդեաց մեզ Քրիստոս ընդ սիրոյն, և որոյ պատուղն ուսոյց մեզ առաքեալն՝ «թէ է կեանք յաւիտենական». առ որ և խրախուսանօք յորդորէ զամենայն հաւատացեալս, որոց ակն ունին տեսանել և վայելել զդէմ յանգիման տեսութիւն Աստուծոյ, որ այն ինքն է երանութիւն սրբոց՝ բանիւս թէ «Զհետ երթայք սիրոյ և խաղաղութեան, առանց որոյ, ոչ ոք կարող է տեսանել զՏէր»։

Այսուհետեւ իմաստնացարուք ուրեմն յանձինս ձեր, ի բաց ընկենլով ի ձէնջ զատելութիւնն և զխռովութիւնն, որ բուսնեալ է ի ձեզ, իբրեւ հանդերձ հին և ապականեալ մարդոյն մերկացէք յանձնէ, զգեցեալ զնորն՝ զսէր և զխաղաղութիւն, զոր Քրիստոս Տէրն մեր իբրեւ հանդերձ փառաւոր երկնային հարսնարանին ետ մեզ առ ի լինել մեզ նովաւ արժանի երկնահրաւէր կոչմանն։